

կենին մէջն իսկ, սիրեց իւր եղբայրները, իւր Ազգին զաւակները և անվեհեր հոգակեց և փառաւորեց իւր Հայ անունը: իւր սիրտը զգաց, բարասեց և լացաւ իւր թշուառ բայց պանծալի Հայրենեաց համար, և նորա նախատեալ և լքեալ վայրկեաններուն մէջ, ինքը առանց յուսահատելու, թէ չկրցաւ զայն կանգնել և փառաւորել, ջանաց՝ մեկնեսաւ մը զառնալով, ճանչցնել բոլոր Եւրոպիոյ և բոլոր աշխարհի, նորա անցեալ մեծ փառքերը և նորա նիւթական և բարոյական գանձերը և պատկառելի ընել նորա անունը: Այս եղաւ իւր եռանդուն հոգը և տենչը մինչեւ այն վայրկեանը, յորում կեանքը յետին շնչոյն հետ կը լքանէր ցաւած սիրտ մը և ցաւած մարմինը*:

ՔԵՆՏԱՆԵՆԵԱՆԵԱՆ ԱՎԵՆԱՐԱՆԵՐ

Պիտի, պիտ'որ, չպիտի..., չպիտի'...,
չի' պիտի..., պիտի և...

Ահա կարգ մը ձեւեր՝ որոնք ամէնքն ալ գործածութեան մէջ են: Պիտի գիմազուրկն սկսինք: Սա նոր ձեւ մը չէ, արդէն հին լեզուին մէջ Ե զարն ի վեր կը գործածուէր. պիտի գալ, պիտի պատուել զնոսա, և այլն, (հմմտ. Զարգաց. 182. — Գննակ. Գեր. 81.) Նոր լեզուն երբ սկսաւ ձեւ մը առնել, և բայերուն ժամանակները պարզուիլ, գիմազուրկ պիտին սեփականուեցաւ ապառնիին, և անկատ. ապառնիին. ձեւ մը որ հին լեզուին մէջ կը պակսէր: Պիտիին մէկ ձեւն է նաեւ պիտ'որը, որ համազօր է պիտիին և տակաւ խափանուելու վրայ է:

Պիտին՝ ոտանաւորի մէջ ալլելալ ձեւերու կ'ենթադրուի. կ'ըլլայ պի', պիտ', տի, տ', և այլն, որոնք եթէ պատշաճ կերպով գործ-

ածուին՝ ոչ միայն տգեղութիւն չեն պատճառեր, այլ նաեւ գեղեցիկութիւն կու տան: Պիտին՝ հաստատական ապառնիին մէջ թէ՛ յետապաս և թէ՛ նախադաս կրնայ ըլլալ. պիտի բերեմ, ընէի պիտի, և այլն. բան մը որ ճաշակի խնդիր է: Բայց բացասականի գործածութեան մէջ՝ դժուարութիւններ ընդ առաջ կ'ըլլեն: Ոմանք կը գրեն. չպիտի բերեմ, չպիտի բերէի. ուրիշներ չպիտի բերեմ, չպիտի բերէի. և ուրիշներ՝ չի պիտի բերեմ, չի պիտի բերէի, և ուրիշներ՝ պիտի չբերեմ, պիտի չբերէի, և այլն: Արդ այս ձեւերէն ձեր է ուղիղը: — Չպիտի բերեմ, չպիտի բերէի ձեւը Բնչպէս պէտք է կարգաւ, շեշտը ուր է, լայն վրայ, թէ վերջի ինիին. եթէ լայնի վրայ, լայ գիրը շեշտուելու ընդունակ չէ, վասն զի ձայնաւոր չէ. եթէ ինիին վրայ, ինչպէս պէտք էր հնչել ըստ հին լեզուին, և ինչպէս ուսուցչայ լրագրաց մէջ շեշտուած կը տեսնենք, այն ատեն կ'արգարանայ չպիտի՝ ձեւը. բայց տանկահայոց լայնի վրայ շեշտելը անտարակոյս է. և զուցէ այս անտեղութիւնը տեսնելով է՝ որ տանկահայ առաջնակարգ գրիչներ՝ կը գրեն. չի պիտի բերէ, չի պիտի տանին, և այլն, որ թէեւ աւելի բանաւոր քան չպիտի ձեւը, բայց ոչ ապաքէն աւելորդ ծանրաբեռնութիւն է չի բացասականը. միթէ լաւ ԷԳ գրել՝ ուրիշներու հետ, պիտի չբերէ, պիտի չբերէին, ուղիղ ձեւով, որ յիշուած ամէն ձեւերէն աւելի ընտրելագոյնն է, որով և աւելի իրաւունք ունի տիրանալ գրական հրապարակին վրայ, ուսմիսները փափաքելի էր որ այս կէտը բաշխուած ընտանաւորներ, և ընդ միշտ հաստատուէր կանոն մը, և ոչ թէ իւրաքանչիւր գրողի բմահաճ կամքը տիրէր լրագրաց սինակներուն կամ գրոց էջերուն մէջ:

Ճանապարհ, շրեմայներու, վրայն, և այլն.

Թէ յ բաղաձայնը քանի՛ կերպ հնչում ունի, ծանօթ է քերականութիւնը նոր սկսող աղու մ'ալ: Երանօթ է նաեւ որ բառերու վերջին անձայն յ գիրը (թո՛ղ բացասութիւնները), հնչողման տառն, կամ երբ իրով ետքը ուրիշ բաղաձայն մը գայ, կը հնչուի

* Առաջին անթով կը փութանք մանրամասնորէն զընէ իւր կենսագրութիւնը:

կէս ինիի հնչմամբ. արքայն, զշխոյիմ, արքայական, և այլն, և այլն. այս կանոնը գրաբարին մէջ։ Աշխարհաբարի կենսական կանոն պարձած է, անձայն յ վերցընել՝ երբ յիկն ետքը դիմորդ յօրերէն մէկը գայ, կամ բառը հոյովութի. գրել՝ տղայ, տղան, վրայ, վրան, և այլն, և այնպէս հոյովել։ Բայց աւելի բարձր աշխարհաբարի գրել կարծողնէ, որ թէպէտ տակաւ խափանուելու վրայ է, բայց կրնայ կերպով մը արգարանալ՝ հին լեզուին մէջ սովորական ըլլալովը։ Իսկ ասոնց հոյովուածնէր ճամբայնիս, շղթայնիս, ըստ, վրայնիս, երախայնիս, բակլայնիս, ծնողայնիս, և այլն, և այլն, քնչպէս պիտի կարենանք արգարացընել։ Պէտք ենք հնչել այդ յ գրելը թէ ոչ. եթէ պէտք ենք հնչել, և չենք կրնար չհնչել, վասն զի մեր լեզուն՝ յ գրելի դատ, այն ալ երբ վերջը գայ՝ ուրիշ անձայն գիր չունի. և գիտենք նաեւ որ նոյն անձայն յիկ՝ բառերու մէջը կէս ինիի պէս կը հնչուի, որեքն պէտք ենք հնչել ձամբանիս, շղթանիս, և այլն, այլապէս ձեւերով։ Արդ կ'անիրաւի՞նք, եթէ փափաքինք որ այսպիսի փուշեր վերնային աշխարհաբարէն և աշխարհաբարը՝ աշխարհաբարի կանոններով հոյովուէր. վասն զի այդ տղեղ ձեւերը ոչ միայն աշխարհաբարի գեղեցկութիւն չեն, այլ նոյն իսկ գրաբարի նախատիքն են. ուր տեսնուած է գրաբարի մէջ այսպիսի տարօրինակ ձեւեր։ Յիշենք քանի մը բառեր յի վերջով, և տեսնենք թէ ինչ քաղցրածայնութիւն կը ստանան հոյովուելու ատեն. հրեայ, հրէի, անդեայ, անդեայ, շղթայ, շղթայից, արժաբեայ, արժաբեի։ Արդ եթէ մեր նախնիք այսչափ խնամք ու փոյթ ունեցիք են՝ ո՞ր և է կերպով չմեղանչելու լեզուական օրինաց և քաղցրածայնութեան զէմ, մենք անոնց որդիներս ինչու այսչափ անփոյթ պիտի ըլլանք արդի լեզուին մաքրութեան։

Ոյ, ու

Քանի որ խօսքը անձայն յ գրին վրայ է, յիշենք նաեւ ոչ վերջով բառերու սխալ լազրութիւնները, որ կ'երեւին գրական հրապարակին վրայ։ Այդ ոչ վերջը հին լեզուին մէջ կը փոխուի ոչ ոչ միայն անուանց հոյովման ատեն, ինչպէս լոյս, լուսոյ, լուսուտ, կոյր, կոյր, կոյրի, գոյն, գոյնոյ, և այլն, այլ նաեւ ուղղականներուն մէջ, անոյշ, անոշ, ոյժ, ուժ, ազոյ, ազոն, աշո, աշո, ձախոյ, ձախո, մեծարոյ, մեծարո, կոփարոյ, կոփածո, ձուածոյ, ձուածո, չարարոյ, չարարո, տղարոյ, տղարո, և այլն, և այլն։ Աշխարհաբարի հոյովութեան ու ձեւն ալ այս կանոնով են դած է. ձիոյ, ձիո, գլխոյ, գլխո, մարդոյ, մարդո, քոյ, քո, տղայ, տղայոյ, տղո, բանի, բանիոյ, բանիո, և այլն*։

Արդ, ժողովածոյներու, հասարակութեան, և այլն, ձեւերը՝ որոնք պատճառ եղան այս տղեղ գրելու, և որ կ'երեւին՝ ինչպէս վերն ըսինք լրագրաց մէջ, աղիք են թէ սխալ։ Վերը տեսանք՝ թէ ինչ անկանոն ձեւեր դուրս ելան՝ այ վերջին յ գիրը առանց վերցընելու հոյովուած բառերէն. ուստի հարկ անհրաժեշտ համարեցինք աշխարհաբար հոյոված ժամանակ յիկ վերցընելու իսկ ոչ վերջը՝ ինչպէս վերը գրուած օրինակներէն կը տեսնուի, չի դուրսուր, այլ ուրիշ փոխանակ հասարակութեան գրելու՝ որուն յին ստիպուած ենք հնչելու, և կամ ժողովածոնէրը՝ որ հայերէնի շնորհ չունի, միթէ լուսազոյն չէ՞ գրել օրինաւոր կերպով, ժողովածու, հասարակութեան, համատեղութեան, քանի որ նախնիք՝ առանց բնագաւառուած իսկ ըլլալու՝ ըրեր են կոփածոյ, կոփածու, ձախածոյ, ձախածու (տես վերը)։ Ինչպէս հայք ուղիղ կերպով կը գրեն, նոյն իսկ

* Ուսումնական շրջանը և նոյն իսկ եթե քաղցրածայնութեան ստեղծականները՝ զոր տաճկահայէր ի կը վերջացընեն, աւստարակ կը գրեն ու, հետեւելով այս կանոնիս Տաճկա-

հայը, կամ թէ ըսենք ստեղծական աշխարհաբարներ կը գրեն, եկեղեցի, աւստարակ, եկեղեցո, հին լեզուն՝ եկեղեցոյ, տաճկահայ. զի, ինչ, ուսում, գրեմ, հին հ. գրեմոյ, և այլն։

տաճկաճայոց մէջ կան ուղիղ գորողներ. Բայց փափաքելի էր որ այս և այսպիսի կանոններն ընդհանրանային, որպէս զի կարգը ու լիշնեւուն գար, և աշխարհաբարն ալ բազմացուած կէտին հասնէր:

Հ. ԱՐՄԷՆ ՂԱՅԻԿԵԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏ ԶԱՆՈՒՄԻՆ

1. Պրոֆ. Մէլէ: — 2. Ամերիկայի ազգայինք: — 3. Զեռագիրք նախնեաց: — 4. Հայունի քառասունըծմ: — 5. Ազգային թատրոմի Տրապիզոմ: — 6. Բարիբարութիւնք: — 7. Զամագամք: — 8. Վիամք: — 9. Ինչո՞ւ չօգնենք: — 10. Շմորհաւորութիւն: — 11. Ջոմնադատական: — 12. Մուրտեան համալսարան:

1. Պրոֆ. Մէլէ. — Փարիզու անուանի և ազգայնոց ծանօթ Պրոֆ. Մէլէ քալ հայազէտն անցեալ տարուան դեկտ. 13ին քառասունիական ճառի մը մէջ բաղդատած է շատ մը իրանեան բառեր համազգի հայկական բառերու հետ:

2. Ամերիկայի ազգայինք. — Ալեքեան լրագիրը Ամերիկայի ազգայնոց մանրամասն վիճակագիրը հրատարակած է (1898 դեկտ. 19), ուսկից կը քաղենք հետեւեալն: Սարաճեան Նախկուպոսի իշխանութեան տակ կը գտնուին 7 ազգային թեմեր՝ յորոց,

Ուսթըրի մէջ կան	1500	Հայ
Պոսթընի » »	2000	»
Նիւ-Նորքի » »	2500	»
Լաւրէնի » »	1000	»
Չիքագի » »	400	»
Բրոքլին » »	1000	»
Ֆրէնչի » »	2000	»
Զանազան քաղաքներու մէջ	440	»

10840

Այս ազգային գաղութը ունի մի Նախկուպոս, վարդապետ, և մի սարկաւազ. զորս ազգայինք խնամօք կը պահեն: Յիշեալ թեր-

թէն կ'իմանանք՝ որ Միացեալ Նահանգներում մէջ շատ մը հարուստներ կան, որոնց մէջ միլիոնաւորներն են միայն Նիւ-Յորքի Գաւառի և Յարլի Նիւ-Յորքի Գաւառի Նիւ-Յորքի մէջ, և Նիւ-Յորքի Գ. Մ. Թաւալմանսում: 15 կամ 20 հայ կայ, որ չորս հարիւր հազար տղարէն մինչեւ կէս միլիոն տղար ունեցող կը համարուին... Այս ուրախալի լոյսն հետ խիստ փափաքելի էր և լսելն՝ թէ այս հարուստ լուշերն ինչ ազգային օգուտներ ունեցներ են:

3. Զեռագիրք Նախնեաց. — Կ. Տէր Խաչատուրեան՝ հետաքրքրաշարժ գաւառացի ճանապարհորդագրութիւն մը կը հրատարակէ Բիւզանդիոնի (1898 դեկտ. 18-30) մէջ, ուր կը գրէ՝ թէ Բաբելոնի Զահմանց գիւղի մէջ կը գտնուի մագաղաթնային ձեռնարկ մը, Գ. Գեորգիանի օրով գրուած լայնիւն 1019ի տաճարնակներն. յիշատակարան չունի. ձեռագիր մը ամենէն հետաքրքրական և կարեւոր մասն իւր յիշատակարանն է. կը խնդրուի մեր ազգային արդոյ ճանապարհորդագրութիւն, որ իրենց այսպիսի շահեկան լրերու մէջ չըմտնան յիշատակարանները իշխելն: Եւրոպայից 500 ուղիղ տուր են, քայց չէ ծախուած: Սկիզբը, վերջն և լուսամքները կ'արտոնուեն հիտապարաշարժ տեղիկութիւններ, կ'առիմ Պայպուլտի և Էրզրումի շէնքերուն վրայ: Յայա՛ առաջը մ'ալ կայ, յորում կը խօսուի Նիւ-Յորքի Տիրամայրն վանքին և իր միարտմոնութեան վրայ:

4. Հայուհի բանաստեղծու. — Իտալացեալ հայ կոմունի բանաստեղծ Վիկտորիա Ալանուրի վրայ՝ մօտեքս իտալացի բանասէր մը ձիւղմանին Գանէվացցի, Profili di scrittori italiani գրքին մէջ կը խօսի. ուսկից հետեւեալ տողերն ի հետաքրքրութիւն բանասիրաց քաղելով կը թարգմանենք:

« Ալանուրի՝ Իտալիոյ առաջին քերթողուհին է, ոչ ոք ասոր կ'ընդգիմանայ: Դատաստանն իս չէ՝ յանդուգն, ուրիշներ զայն արտաստեղծին: Կոմունիստ լայա՛ անուանեց զնա ամենառաջին (primissima) մեր բանաստեղծուհիներուն մէջ: Եւ համակրելին Գեգի ըսա՛ւ թէ Ալանուր մէկն է այն կանանց որ ամենէն աւելի մօտեցան արուեստի կատարելութեան անմատչելի ժայռին: Նօյանու, դիտնալով թէ պիտի գրադիմ Ալանուր օրիորդին վրայ գրելու, փութաց ինձ գրելու թէ ճիշդ նշանին կը գարնէ՛ր եթէ Իտալիոյ առաջին քերթողուհին անուանէի զինքը: Այսիք քաղեցի Նօյանուային խնդրելու իրեն մէկ կարծիքը:

1. Այս և հետագայ անուանք, կեղծ կամ բուն անուաններ են Իտալիոյ արդի մի քան

զմիւսն աւելի հռչակուած բանաստեղծներու և հեղինակաց: